ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏ

«10» «հուլիսի» 2024թ. N 219-Ա

ՀՐԱՄԱՆ

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍԵՎՔԱՐԻ ԵՎ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի պահանջներով, շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի հունվարի 11-ի N 14-Լ հրամանի հավելվածի 17-րդ կետի 10-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել էկոպարեկային ծառայության ՀՀ Տավուշի մարզային վարչության Սևքարի և Նոյեմբերյանի տեղամասի փորձագետի աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

7/10/2024

X

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Signed by: KIRAKOSYAN VLADIMIR 1104840278 Վ.Կիրակոսյան

«10» «հուլիսի» 2024թ.
ք.Երևան

Հավելված
Էկոպարեկային ծառայության պետի
2024 թվականի հուլիսի 10-ի N 219-Ա հրամանի

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍԵՎՔԱՐԻ ԵՎ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

1. ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Փորձագետ (այսուհետ՝ Փորձագետ) ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է Էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթի իրականացման ծավալների կտրուկ ավելացմամբ:

2. ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.
- բարձրագույն կրթություն.
- համակարգչով աշխատելու ունակություն.
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, «Էկոպարեկային ծառայության մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Բուսական աշխարհի մասին», «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» և այլ իրավական ակտերի իմացություն:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Փորձագետը ներգրավվում է վեց ամիս ժամկետով:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետը վեց ամսվա ընթացքում իրականացնելու է աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

1. պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության (այսուհետ՝ Օրենսդրություն) կանոնների ու նորմերի պահպանման նկատմամբ հսկողություն.

2. պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ապահովում.

3. Օրենսդրության խախտումների հայտնաբերում, կանխում և կանխարգելում.

4. բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանության, բնականոն զարգացման վրա մարդածին բացասական ազդեցության կանխարգելման կամ մեղմացման ապահովում:

5. պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների կանխարգելման, ինչպես նաև հրդեհների և արտակարգ այլ պատահարների ժամանակ անհետաձգելի միջոցառումների իրականացում.

6. պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում ինքնակամ զավթումների, ապօրինի հատումների, ապօրինի արածեցումների, աղտոտման, աղբոտման և կենսաբազմազանությանը վնաս պատճառող, օրենսդրությամբ արգելված այլ գործողություններ կանխելու ուղղությամբ համալիր միջոցառումների իրականացում:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Փորձագետը ներկայացնում է հաշվետվություններ եռամսյակային կտրվածքով և վերջնական:

6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է երեք ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

Աշխատանքների գնահատման չափանիշներն են՝

1) օրենսդրությամբ սահմանված պահանջների միասնական կիրարկում,
2) իրավախախտման դեպքում խախտումներն արձանագրելու, իրավախախտին ցուցումներ և կարգադրություններ տալու, նրանց գործողությունները արգելելու, դադարեցնելու և կասեցնելու անհրաժեշտ հմտությունների տիրապետում,
3) տրված մեթոդական ցուցումների և հանձնարարականների կատարում, իր աշխատանքի ընթացքի և արդյունքների վերաբերյալ փաստաթղթերի պատշաճ կազմում և լրացում,
4) պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացված ինքնակամ զավթումների, ապօրինի հատումների, ապօրինի արածեցումների, աղտոտման, աղբոտման և կենսաբազմազանությանը վնաս պատճառող օրենսդրությամբ արգելված այլ գործողությունների կանխմանն ու կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումների կազմակերպում, իրականացում և դրանց վերաբերյալ հաշվետվության ներկայացում, անհրաժեշտության դեպքում՝ իրավասու այլ մարմինների ներգրավում: